

Պ. Մ. Գաբրիելյան

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍԱԿԱՆ Ս Ի Ս Տ Ե Մ Ը

Գերմաներեն և հայերեն լեզուների շարադասության համեմատական ուսումնասիրությունը (որը մինչ այժմ չի կատարված) լեզվաբանության և լեզվագիտության համար ունի տեսական ու գործնական մեծ նշանակություն:

Ո՞րն է գերմաներեն և հայերեն լեզուների շարադասական հիմնական առանձնահատկությունը:

Գերմաներեն լեզվի շարադասության հիմնական առանձնահատկությունը հանդիսանում է այսպես կոչված շրջանակային կառուցվածքը (die Rahmenkonstruktion), այսինքն՝ երբ նախադասության միենույն անգամի երկու մասերը, կամ ենթական ու ստորոգյալը իրարից զատվելով, իրենց մեջ են ընդգրկում նախադասության այլ անդամներ: Զատվող մասերից մեկը՝ առաջինը, դրվում է ընդգրկվող անդամների սկզբում, իսկ մյուսը՝ երկրորդը, վերջում, ստեղծելով շրջանակ:

Գերմաներեն լեզվի մեջ կարող է շրջանակ կազմվել երեք տարրեր տեսակ միջոցներով՝ ստորոգյալով, ենթակայով ու ստորոգյալով և հոդով կամ հոդին փոխարինող բառով ու գոյականով:

Օրինակ՝

Die Bourgeoisie, wo sie zur Herrschaft gekommen, hat alle feudalen, patriarchalischen idyllischen Verhältnisse zerstört. (Komm. Man)

Այս նախադասության մեջ կա տարբեր միջոցներով արտահայտված՝ երեք շրջանակ:

- ա) hat zerstört (ստորոգյալով),
- բ) sie gekommen (ենթակայով ու ստորոգյալով) և
- գ) alle Verhältnisse (դերանունով ու գոյականով):

Այսպիսով, ըստ կազմության միջոցների, շրջանակը լինում է երեք տեսակ՝

- ա) Ստորոգյալով շրջանակ,
- բ) ենթակայով ու ստորոգյալով շրջանակ և
- գ) հոդով ու գոյականով շրջանակ:

1. ՍՏՈՐՈԳՅԱԼՈՎ, ՇՐՋԱՆԱԿ

Անկախ (կամ գլխավոր) նախադասության մեջ շրջանակը կազմվում է ստորոգյալի փոփոխվող և անփոփոխ մասերի բաժանման միջոցով. փոփոխվող մասը դրվում է նախադասության սկզբում՝ առաջին կամ երկրորդ տեղում, իսկ անփոփոխ մասը՝ ընդհանրապես, նախադասության վերջում: Այսպիսով, ստորոգյալի փոփոխվող ու անփոփոխ մասերը դրվելով նախադասու-

թյան ծայրամասերում, իրենց մեջ են առնում նախադասության մյուս անդամները, պարփակելով այն՝ ստեղծում են շրջանակ:

P P Սխեմա № 1

Գերմաներենում ստորոգյալով շրջանակը ծավալի տեսակետից ամենամեծն է և կարող է իր մեջ ընդգրկել ոչ միայն ստորոգյալի խմբին պատկանող անդամներ, այլ ամբողջ նախադասությունը, և նույնիսկ նա կարող է իր մեջ միաժամանակ պարփակել նաև որևէ երկրորդական նախադասություն:

Ստորոգյալով շրջանակն արտահայտվում է՝

1) Բայի բաղադրյալ ժամանակով, երբ անսխեմատիկ մասը զրկում է նախադասության վերջում. օրինակ՝

Die Bourgeoisie *hat* durch ihre Exploitation des Weltmarkts die Produktion und Konsumtion aller Lander kosmopolitisch *gestaltet*. (Komm. Man.)

2) Անջատական նախածանց ունեցող բայերի պարզ ժամանակով, երբ անջատական նախածանցը զրկում է նախադասության վերջում: Նույնը վերաբերվում է նաև բարդ բայերին. օրինակ՝

Die Bourgeoisie *hebt* mehr und mehr die Zersplitterung der Produktionsmittel, des Besitzes und der Bevolkerung *auf*. (Komm. Man.)

3) Բայական բաղադրյալ ստորոգյալով, երբ վերջում զրկում է Infinitiv-ը որպես անսխեմատիկ մաս. օրինակ՝

Vergiftet sind meine Lieder;—

Wie *konnt' es anders sein?* (Heine)

„Wollten Sie mir wohl zu einer

vorhabenden Reise ihre Pistolen *leihen?*“ (Goethe).

4) Անվանական ստորոգյալով, երբ ստորոգելիական վերագիրը զրկում է նախադասության վերջում:

Այս դեպքում վերագիրը կարող է ունենալ վերջադաս լրացումներ, որոնք չեն մտնի շրջանակի մեջ. օրինակ՝

Die Kommunisten *sind* also praktisch der entschiedenste, immer weiter treibende *Teil* der Arbeiterparteien aller Lander. (Komm. Man.)
Sie *hielten* die Fahne in allen Kampfen *hoch*.

5) Գայուն բառակապակցությամբ արտահայտվող ստորոգյալով, եթե անսխեմատիկ մասը բաժանվելով բայից, զրկի նախադասության վերջում: Այս դեպքում կարող է անսխեմատիկ մասը բայից նաև չբաժանվի. օրինակ՝

Er *hatte* vor der Gefahr keine Angst *կամ* Er *hatte keine* Angst vor der Gefahr. (այստեղ չի բաժանվել):

6) Nicht (nicht mehr, wenigstens) ժխտականով, որը վերաբերվում է ստորոգյալին և զրկում է նախադասության վերջում. օրինակ՝

Ich *zwinge* meine Tochter *nicht*. (Schiller).

2. ԵՆԹԱԿԱՅՈՎ ՈՒ ՍՏՈՐՈԳՅԱԼՈՎ ՇՐՋԱՆԱԿ

Երկրորդական նախադասության մեջ շրջանակը կազմվում է ենթակալի ու ստորոգյալի միջոցով, որոնք իրարից հեռանում են. ենթական զրկում է նախադասության սկզբին մոտ, իսկ ստորոգյալը՝ նախադասության վերջում, և նրանք իրենց մեջ են առնում նախադասության մնացած անդամները:

S P

Սխառմ № 2

օրինակ՝

Ist doch sehr schon, wenn *man* am Jahresende eine kleine runde Summe beisammen *hat*. (willi Bredel). Es ist hohe zeit, daß *die Kommunisten* ihre Anschauungsweise, ihre Zwecke, ihre Tendenzen vor der ganzen Welt offen *darlegen* und dem Marchen von Gespenst des Kommunismus ein Manifest der Partei selbst *entgegenstellen*. (Komm. Man.)

3. ՀՈԴՈՎ ՈՒ ԳՈՅԱԿԱՆՈՎ ՇՐՋԱՆԱԿ

Հոգով ու գոյականով շրջանակ է կազմվում, երբ հոգի կամ հոգին փոխարինող բառի ու գոյականի միջև գրվում են մեկ կամ մի քանի առաջադաս որոշիչներ: Այսպիսով հոգը բաժանվելով գոյականից շարժվում է դեպի առաջ և գրվում է որոշիչից առաջ և որոշիչի վերջում գրվող որոշյալի հետ կազմում է մի փակ շրջանակ:

d S

Սխառմ № 3

Օրինակ՝

Die KLEINE Margarit pflückte im Garten *eine SCHONE* Rose.

Auf dieser Stufe bilden die Arbeiter *eine* über *das* ganze Land zerstreute und durch die Konkurrenz zersplitterte *Masse*. (Komm. Man.)

Այս շրջանակի մեջ կարող է մտնել միայն որոշյալին վերաբերվող առաջադաս պարզ կամ ընդարձակ որոշիչներ: Այս շրջանակի մեջ կարող է մտնել նաև նույն տեսակի մի ուրիշ շրջանակ, ինչպես նկատում ենք երկրորդ օրինակի մեջ:

Հոգով ու գոյականով շրջանակն իր գործածման տեղով, ընդգրկման ծավալով և պարունակվող բովանդակությամբ տարբերվում է ստորոգյալով, ենթակալով ու ստորոգյալով շրջանակից:

Հոգով ու գոյականով շրջանակը կարող է հանդես գալ բոլոր տեսակի նախադասությունների մեջ այն տեղերում, որտեղ հանդես է գալիս որոշյալը: Ստորոգյալով շրջանակը հիմնականում հանդես է գալիս անկախ (կամ զիսավոր) նախադասության մեջ, իսկ ենթակալով ու ստորոգյալով շրջանակը՝ երկրորդական նախադասության մեջ:

Հոգով ու գոյականով շրջանակն իր մեջ կարող է պարփակել միայն որոշյալին վերաբերվող նախադաս լրացումներ:

Ձնայած որ ստորոգյալով շրջանակը առաջին հերթին ընդգրկում է ստորոգյալին վերաբերվող լրացումներ, բայց կարող է իր շրջանակի մեջ առնել նաև ենթական իր լրացումներով, այսինքն՝ ամբողջ նախադասությունը և նույնիսկ միջադաս երկրորդական նախադասություններ: Հետևապես, այս շրջանակի մեջ կարող են մտնել մեկ կամ մի քանի հոգով ու գոյականով և ենթակալով ու ստորոգյալով կազմվող շրջանակներ:

Ենթակալով ու ստորոգյալով շրջանակի մեջ կարող է մտնել հոգով ու գոյականով շրջանակը, սակայն վերջինիս մեջ չի կարող տեղավորվել այլ տեսակի շրջանակ:

Հետևապես, շրջանակի մեջ տարրական ծավալի մեծությունից կխնկվի պետք է, որ գերմաներենում ընդունել երեք տեսակ շրջանակ, որը նաև համապատասխանում է շրջանակ կառուցելու միջոցներին:

1) Մեծ շրջանակ, որը կազմվում է ստորոգյալով,

2) Միջակ շրջանակ, որը կազմվում է ենթակայով և ստորոգյալով,

3) Փոքր շրջանակ, որը կազմվում է հոգով ու գոյականով:

Առանց շրջանակի են այն նախադասությունները, որոնց մեջ կամ բացակայում են շրջանակ կազմելու լրիվ միջոցները, կամ էլ սրանց առկայության դեպքում չկան շրջանակի մեջ մտնող անդամներ. օրինակ՝

Die Affen leben in tropischen Waldern.

Ein Fichtenbaum steht einsam,

Im Norden auf kahler Höh',

Im schläfert; mit weißer Decke

Umhüllen ihn Eis und Sehnee:

(Heine)

Գարող են բարդ ստորադասական նախադասության մեջ միաժամանակ հանդես գալ և՛ մեծ, և՛ միջակ, և՛ փոքր շրջանակներն առանձին-առանձին, կամ միահյուսված իրար մեջ. օրինակ՝

Einen interessanten Artikel hatte ich schon morgen selbständig geschrieben, als mein Freund zu mir nach Hause kam.

... Anfang Oktober fuhr ein gewisser Franz Marnet von dem Gehöft seiner Verwandten, das zu der Gemeinde Schmiedtheim im vorderen Taunus gehörte, ein paar Minuten früher als gewöhnlich auf seinem Fahrrad ab.

(A. Seghers, Das siebte Kreuz)

Շրջանակային կառուցվածքը գերմաներեն լեզվի մեջ կազմում է շաղադասական մի սիստեմ, որը օտարամուտ չէ, այլ նա բխում է գերմաներեն լեզվի էությունից և հարազատ է նրան: Շրջանակային սիստեմը գերմաներեն լեզվի ներքին զարգացման մի անխուսափելի օրինաչափություն է: Առհասարակ գերմաներենում նկատվում է մի ընդհանուր տենդենց, որ նախադասության մեջ այն անդամը, որը ավելի է կապվում ստորոգյալի հետ և նախադասության մեջ ունի համեմատաբար ավելի մեծ կշիռ, մղվում է դեպի նախադասության վերջը, որպեսզի ստորոգյալի հետ միասին ընդգրկի հնարավորին չափ շատ նախադասության այլ անդամներ և կազմի շրջանակ:

Սրանով է բացատրվում, որ նախադասության մեջ մի քանի խնդիրների առկայության դեպքում, այն խնդիրն է դրվում վերջում, որն ավելի է կապվում բայի հետ և համեմատաբար ավելի մեծ նշանակություն է ստանում տվյալ դեպքում:

Akkusativ Objekt-ը սովորաբար դրվում է Dativ Objekt-ից հետո, բայց հնարավոր կլինի դնել նաև հակառակը, եթե Dativ Objekt-ը տվյալ դեպքում հանդիսանա նորություն և ավելի մեծ նշանակություն ստանա: Դրանով է բացատրվում նաև այն, որ եթե խնդիրը արտահայտվի ոչ թե պոչականով, այլ դերանունով, ապա նշանակությամբ թուլանալով շարժվում է նա դեպի առաջ՝ դեպի ստորոգյալի փոփոխվող մասը:

Ինձ թվում է, որ գերմաներենում նախադասության անդամների տեղադրության ընդունված նորմաները հիմնականում բխում են շրջանակային սիստեմից:

Ձնայած որ շրջանակային սիստեմը բխում է գերմաներեն լեզվի բուն էությունից, որ նա հանդիսանում է գերմաներեն լեզվի շարադասության անկապտելի հատկությունը, բայց և այնպես նրա մեխանիկական, չոր ու ցամաք սխեմատիկ կիրառումը տգեղացնում է ոճը և հաճախ հասցնում է այն անմտություն:

Երբեմն շրջանակի պարփակող մասերն իրարից այնքան շատ են հեռանում, և նրանց միջև այնքան շատ կտրվածություններ են ստեղծվում, որ հնարավոր չի լինում իսկույն հասկանալ, ամբողջական պատկերացում ունենալ:

XVIII դարում զարգացող գրական լեզվի մեջ մշակվում էին շարադասական նորմաներ, որոնց համաձայն պարտադիր կերպով պահանջվում էր շրջանակային կառուցվածքի մեխանիկական ու ձևական դործադրում՝ առանց ի նկատի ունենալու նախադասության բովանդակությունն ու քերականական կազմը:

Եվ ահա այդ ժամանակ շրջանակային կառուցվածքի այդպիսի մեխանիկական ու շարժուն գործադրումը հասցնում էր աղաղակող ծայրահեղությունների: Լեզվի մեջ առաջանում էր բյուրոկրատական գրասենյակային արատավոր ոճ, որ հասնում էր հրեշավոր չափազանցությունների:

Դպրոցական քերականությունը պահանջում էր շրջանակային կառուցվածքի քարացած ու մեխանիկական գործադրում: Ըստ որի անկախ նախադասության մեջ ստորոգյալի անփոփոխ մասը, ինչպես նաև երկրորդական նախադասության մեջ ստորոգյալը, անպայման, առանց որևէ տարբերության, պետք է դրվեին նախադասության ամենավերջում, թեև ոչ որ այդ վերջը չափազանց հեռու լիներ սկզբից:

Էնգելսը պայքարել է գերմաներեն լեզվի ոգուն խորթ ոճաբանական ծայրահեղությունների դեմ և պահանջել է խուսափել մեծածավալ դպրոցական շարահյուսությունից: 1884 թվականին է. Բեռնշտեյնին գրած նամակում, թարգմանության ընթացքում Մարքսի ոճը ճիշտ պահպանելու կապակցությամբ, ասում է՝

«Եթե Դուք, թարգմանելով բովանդակությունը գերմաներեն, այնուհետև մի անգամ էլ կարդաք ձեռագիրը, ուշադրություն դարձնելով ոճաբանական հարմար կարգալու վրա և այդ ժամանակ կհիշեք, որ ամենուրեք, որտեղ միայն հնարավոր է, հարկավոր է խուսափել մեծածավալ դպրոցական շարահյուսությունից, որը մտցրել են մեր բոլորի գլխում և որի ժամանակ երկրորդական նախադասության մեջ բայն անպայման դրվում է ամենավերջում, — այդ ժամանակ Դուք չեք հանդիպի մեծ դժվարությունների և նույնիսկ ինքներդ բոլորը կարգի կբերեք»: (K. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XXVIII, стр. 350).

Էնգելսը և՛ պայքարում էր շրջանակային կառուցվածքի մեխանիկական գործադրման դեմ, որ առանց որևէ տարբերության պարտադիր կերպով ստորոգյալի անփոփոխ մասը կամ երկրորդական նախադասության բայը լոկ ձևականության համար մղվում էին անվերջ դեպի նախադասության պոչը, և՛ պայքարում էր հակառակ ծայրահեղության դեմ, այսինքն՝ շրջանակային կառուցվածքի վերացման դեմ. ինչպես որ կարող էին խոսել հրեաները:

1886 թվականին Ֆ. Ս. Ջորգենին գրած մի նամակում Էնգելսն այս մասին պարզություն ասում է.

«Այն պուրիստի վերաբերմամբ, որը պայքարում է մեր ոճի և մեր կետադրություն դասավորության դեմ, նա չգիտի ոչ գերմաներեն, ոչ անգլերեն լեզուն, ուրիշ կերպ նա չէր գտնի անգլիաբանություն այնտեղ, որտեղ աչն չկա: Այն գերմաներեն լեզուն, որի մասին նա երազում է և որը մեկ մեխիկ էին դպրոցում, նրա նողկալի կառուցված պարբերություններով և ստորոգյալով, ենթակալից 10 վերստ հեռացող անվերջ երկրորդական նախադասություններով, հենց պոչում, — այդ գերմաներեն լեզուն այնպիսին է, որ ինձ պետք կգար 30 տարի, որպեսզի սովորեի պրծնել նրանից: Դպրոցական ուսուցիչների այդ բլուրկրատական գերմաներեն լեզուն, որի համար Լեսինգն բնդհանրապես գոյություն չունի, այժմ անհայտանում է նույնիսկ Բերմանիայում:

Ինչ կասեր այս քաղքենին, Լեթ լսեր, ինչպես են խոսում ռալիստագում. այնտեղ փոխել են այդ դարձվածքի սարսափելի կառուցվածքը, որովհետև շարունակ խճճվում էին նրանում և խոսում էին ինչպես հրեաները..

«Als der Bismark ist gekommen vor die Zwangswahl, hat er lieber gekusst den Papst auf den Hintern als die Revolution auf den Mund». (Երբ Բիսմարկը եկավ հարկադրական ընտրություններին, նա գերադասեց, համարել պապի նստատեղը քան ռեվոլյուցիայի շուրթերը) և այլն: Այս նորությունը պատկանում է Լասկերչիկին, — աչն միակ լավը բոլորից, ինչ նա արեց: Եթե պարոն պուրիստը հայտնվի իր դպրոցական գերմաներեն լեզվով Բերմանիայում, նրան կասեն, որ նա խոսում է ամերիկերեն. «Դուք գիտեք, ինչքան մանրակրկիտ է գերմանական գիտնական քաղքենին», — այդպիսին է նա, ըստ երևույթին, հատկապես Ամերիկայում: Բերմաներեն դարձվածքի կառուցվածքը, կետադրության նշանների կանոնների դասավորության հետ միասին աչն ձևով, ինչպես դրանք 40 — 50 տարի առաջ դասավանդում էին դպրոցներում, արժեք միայն աչն, որպեսզի գցել նրանց աղբարկղ: Այդպես նրանց հետ վարվում են և Բերմանիայում»: (К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XXVIII, стр. 552, 553)

Իհարկե այդ չի նշանակում, թե էնգելսն ընդհանրապես դեմ էր շրջանակին կառուցվածքի օգտագործման, որը օրինաչափ է գերմաներեն լեզվի համար: Նա պայքարում էր գերմաներեն լեզվին միանգամայն խորթ չափազանցությունների դեմ, որոնց հարկավոր էր միայն աղբարկղ գցել:

Շրջանակային կառուցվածքը միանգամայն ճիշտ ու համաչափ օգտագործել են Մարքսն ու էնգելսը:

Սակայն հետզհետե դադարում է շրջանակային կառուցվածքի մեխանիկական գործադրումը և հնարավոր է լինում օրինականորեն շրջանակից դուրս բերելու նախադասության որոշ բառեր, բառախմբեր, դարձվածքներ կամ ամբողջ նախադասություն:

Նույնիսկ սակավ ղեկավարում տեղի է ունենում շրջանակի լրիվ քայքայում, բայց այդ ամենին չի նշանակում, թե գերմաներեն լեզուն հրաժարվում է շրջանակային սխտեմից, թե վերջինս իր դարձն ապրել է, կյանք չունի և ըստ սովորության մնում է լեզվի մեջ իբրև հին շրջանից մի մնացուկ:

Շրջանակային կառուցվածքն այժմ էլ գերմաներեն լեզվի մեջ ամենուրեք կենդանի գործում է և կարևոր դեր ունի, առանց որի չի լինի գերմաներեն լեզվի շարադասությունը:

Յուրաքանչյուր շրջանակ՝ մեծ, միջակ կամ փոքր կարող է լինել երկու տեսակ՝ լրիվ շրջանակ և կիսաշրջանակ:

Մեծ շրջանակը լրիվ է լինում, երբ ստորոգյալի անփոփոխ մասը դրվում է նախադասության վերջում և վերջից որևէ անգամ զուրա չի մնում: Միջակ շրջանակը լրիվ է լինում, երբ երկրորդական նախադասության ստորոգյալը ամբողջությամբ կամ նրա փոփոխվող մասը դրվում է վերջում և երկրորդական նախադասության վերջից որևէ անգամ զուրա չի մնում:

Փոքր շրջանակը լրիվ է լինում, երբ նախադասության մեջ գոյականով արտահայտված որոշյալին վերաբերվող բոլոր նախադասա որոշիչները դրվում են հոգի կամ հոգին փոխարինող բառի և որոշյալի միջև. օրինակ՝

Die Bourgeoisie, wo sie zur Herrschaft gekommen, hat all feudalen, patriarchalischen, idyllischen Verhältnisse zerstört. (Komm. Man.).

Այս օրինակի մեջ երեք տեսակ շրջանակներն էլ լրիվ են: Միջակ շրջանակից բաղադրյալ ժամանակով արտահայտված ստորոգյալի օժանդակ բաշը զեղչված է, սակայն ավյալ դեպքում այդ չի խանգարում շրջանակի լրիվ լինելուն:

Մեծ շրջանակի լրիվ լինելուն չի խանգարում, երբ նախադասության սկզբից առաջին տեղը գրավում է նախադասության որևէ անդամ, ամբողջական դարձվածք, նույնիսկ որևէ միջադաս երկրորդական նախադասություն: Հաճախ կարող է, որոշ կանոնի համաձայն, ստորոգյալի փոփոխվող մասը դրվել նաև նախադասության սկզբում՝ առաջին տեղում, և այսպիսով շրջանակի մեջ կընդգրկվեն նախադասության բոլոր անդամները:

Երբ երկրորդական նախադասության սկզբում դրվում է շաղկապ կամ շաղկապի հետ միասին որևէ բառախումբ ապա նոր ենթական, այդ էլ միջակ շրջանակի լրիվ լինելուն չի խանգարում:

Շրջանակի լրիվ լինելը չի կախված նրա մեջ ընդգրկված բառերի քանակից: Լրիվ շրջանակի մեջ կարող է լինել նույնիսկ մեկ բառ:

Շրջանակը լինում է կիսատ, երբ շրջանակի մեջ ընդգրկվող անդամներից մի մասը զուրա է զալիս և դրվում շրջափակող մասի վերջում:

Փոքր շրջանակը կարող է կիսաշրջանակ լինել, երբ որոշյալին վերաբերվող որոշիչների մի մասը դրվում է առաջ հոգի կամ հոգին փոխարինող բառի ու գոյական որոշյալի միջև, իսկ մյուս մասը՝ որոշյալից հետո. օրինակ՝

Ein HERZLICHER WUNDERBARER Regen, KALT, KLAR, stürzte aus dem SCHWARZEN Himmel.

(Kellermam, Der 9. November)

Այս նախադասության մեջ կա երկու փոքր շրջանակ, որոնցից առաջինը կիսաշրջանակ է, իսկ երկրորդը՝ լրիվ:

Փոքր շրջանակը կարող է լինել կիսաշրջանակ այն օրենքի համաձայն, ինչ օրենքով առաջադաս որոշիչը դրվում է որոշյալից հետո:

Մեծ ու միջակ շրջանակները թերի, կիսատ են դառնում գրեթե միևնույն օրենքի համաձայն: Անկախ նախադասության մեջ մեծ (ստորոգյալով) շրջանակից և երկրորդական նախադասության մեջ միջակ (ենթակալով ու ստորոգյալով) շրջանակից զուրա, նախադասության վերջում են դրվում այնպիսի բառեր ու բառակապակցություններ, որոնք որոշ չափով ինքնակա

ամփոփ իմաստ ունեն և հաճախ մոտ են երկրորդական նախադասության իմաստին:

Շրջանակը շրջափակող երկրորդ մասն օրինաչափորեն հետ է քաշվում նախադասության վերջին տեղից և վերջին տեղը դրավում են նախադասության այլ անդամներ այն դեպքում, երբ նախադասության իմաստային ամբողջությունը չի խախտվում և մնում է դարձյալ ավարտված և ամփոփ մի ամբողջություն:

Նախադասության վերջում, շրջանակից դուրս են դրվում մյուս անդամներից զատվող, առանձնակի կշիռ ունեցող բառերն ու բառախմբերը, որոնք լրացնում ու ճշգրտում են նախադասության իմաստը:

Շրջանակից բառերի կամ բառախմբերի դուրս դնելը հանդիսանում է մի միջոց, որով ընդգծվում, ուժեղացվում է այդ բառերի ու բառախմբերի իմաստը և առանձնակի ուշադրություն է հրավիրվում դրանց վրա. օրինակ՝

Bereits sechs Monate nach dem Beginn seiner Studien war Marx imstande, *die russische Literatur im Original zu lesen.*

„Aber seit die Muhme tot ist,
Können wir ja nicht mehr gehen
Nach dem Schützenhof zu Goslar,
Dorten ist es gar zu schön“.

(H. Heine)

Sie werden Ihr Gehalt bekommen, *wie jeder andere auch.* (Villi Bredel).

Այսպիսով գերմաներեն լեզվին հատուկ է շրջանակային սիստեմը, որը հանդիսանում է շարադասության ողնաշարը: Ինչպես տեսանք նախադասությունների մեջ հանդես են գալիս երեք կարգի տարրեր տեսակի շրջանակներ, ինչպիսին են՝

1. Ըստ շրջանակ կազմելու միջոցների լինում են՝

- 1) Ստորոգյալով շրջանակ,
- 2) Ենթակալով ու ստորոգյալով շրջանակ և
- 3) Հոդով ու գոյականով շրջանակ.

2. Ըստ շրջանակի ընդգրկման ծավալի լինում են՝

- 1) Մեծ շրջանակ,
- 2) Միջակ շրջանակ և
- 3) Փոքր շրջանակ.

3. Տվյալ դեպքում շրջանակի մեջ անդամների ընդգրկման կամ որոշ մասի դուրս բերման տեսակետից լինում են՝

- 1) Լրիվ շրջանակ և 2) Կիսաշրջանակ:

Գերմաներեն լեզվի մեջ շրջանակն որպես մի միջոց մասնակցում է նախադասության անդամների միավորմանը. ամբողջացմանը և նպաստում է նախադասության ավարտվածությունը:

Շրջանակը տեսք է տալիս լեզվին, երանգավորում է այն. ստեղծում է ուրախատուկ, առանձնակի սեփական ոճ, որով նաև գերմաներեն լեզուն իսկույն կենթ առանձնանում տարրորոշվում է մյուս լեզուներից:

Ինչպես տեսանք գերմաներեն լեզվին յուրահատուկ է շարադասության շրջանակային սիստեմը: Այդ համեմատությամբ արդյոք հալոց լեզուն ինչպիսի՞

շարադասական սիսեմում ունի: Ինչպիսի՞ շարադասական կառուցվածք է լուրահատուկ հայերեն նախադասության անդամներին: Դժվար է միանգամից բացահայտել հայոց լեզվի շարադասական սիսեմը:

Հայոց լեզվի շարադասությունը շատ ազատ ու ճկուն է: Միևնույն նախադասության անդամները կարող են ունենալ հնարավոր բազմաթիվ տեղափոխություններ՝ առանց նախադասության իմաստի ու բնույթի փոփոխության: Այդ էլ, իհարկե, առանձնահատուկ է հայերեն շարադասությունը:

Դեռ իր ժամանակ արևմտահայ աշխարհաբարի քերականության հիմնադիր Ա. Այտընյանը գրել է. «Հայերեն լեզուն այն լեզվաց կարգն է, որոնց նաև սովորական կամ բնական ոճը շատ լեղաշրջության կամ ետեւառջության ազատություն ունի» (Քննական քերականություն արդի հայերեն լեզվի, էջ 252):

Այդ չի նշանակում, որ հայոց լեզուն չունի որևէ շարադասական ինքնատիպ սիսեմ: Նրա ինքնատիպությունն էլ հալ ժողովրդի կողմից ընդունված և քերականությամբ սահմանված այն շարադասական եղանակն է, որով հնարավոր է լինում հայերեն մտքեր հաղորդել (չնայած, որ այդ եղանակը դեռևս լրիվ չի ճանաչված): Չնայած նախադասության անդամների հնարավոր բազմաթիվ տեղափոխությունների, բայց և այնպես չի կարելի այն կամայական ձևով խճճել, որի դեպքում, կորցնելով շարադասական ընդունված ձևը՝ կկորցնի նաև իմաստը:

Ինչպես գերմաներենում, այնպես էլ հայերենում նախադասության շարադասության կմախքը կազմում են գլխավոր անդամները, որոնք նախադասության մեջ մեծ դեր և նշանակություն ունեն, և որոնցից առաջ ու հետ շարվում են մյուս անդամները:

Հայերեն նախադասության անդամներն որևէ միջոցով չեն պարփակվում, ինչպես այդ լինում է գերմաներենում:

Հայերենում նախադասության այն անդամները, որոնք վերաբերվում են իրար. այսինքն՝ իրար են լրացնում, ձգտում են իրար մոտ դրվել և չբաժանվել:

Նախադասության անդամները շարադասվում են ըստ իրենց իմաստաբանական կշռի ու տրամաբանական շեշտի: Այն անդամը, որ տվյալ դեպքում ավելի մեծ իմաստաբանական կշիռ ունի, նա էլ դառնում է կենտրոնականը, հիմնականը, որի հետ էլ կապվում է տրամաբանական շեշտը և որի շուրջն էլ շարադասվում են մյուս անդամները: Ըստ որում, առաջին հերթին, հատկապես սրան է հարում ստորոգյալը: Հայերենում շարադասական այս կամ այն ձևին համընթաց քայլում է նաև տրամաբանական շեշտը, որ շարադասական զանազան փոփոխություններ, հիմնականում, բխում են նրա ազդեցությունից:

Այսպիսով հայերեն շարադասությունը, կարելի է ասել, հիմնականում բնութագրվում է իմաստի և տրամաբանական շեշտի փոխազդեցությամբ, բաց ճկուն մի սիսեմով: